

լսէ , ան անիրաւին խօսքին չեմ կրնար դիմանալ կ'ըսէ : Ինչպէս ամէն լսէ , թըշնամիս ըլլար՝ կը համբերէի կ'ըսէ , բայց բարեկամ մարդէ քաջել չեմ կրնար : Երջասպէս ամէն պարագայ իր անհամբերութեանը պատճառանք կ'ընէ . մեծ համբերութիւն ըրած կը սեպէ , երբոր գլուխը շարժելով՝ համբերութիւն կ'ըսէ . չմտածեր որ ան խօսքն ալ անհամբերութիւն մըն է . համբերութիւն ընել ուզողը , ատ խօսքը բերնէն չի հաներ . ուրեմն համբերութիւնն ալ իր բերանը անհամբերութիւն կը նշանակէ :

Ինչ սիրելի բնութիւն է անոնցը , որ իբր թէ իրենց ախորժածը ամենեւին ուրիշի ախորժածը ըլլար՝ ամէն բանի սիրով զիրենք կը յարմարցնեն : Եւսօր սեղանը քիչ մը ուշացեր է , կերակուրը պատրաստ չէ եղեր . ինչ կ'ըլլայ , աշխարհք չի փլչիր անով . բայց անհամբերը կը սկսի նեղասրտիլ , կերակուրը լեղի կը դառնայ՝ իրեն ալ , սեղանակիցներուն ալ : Ինչպէս որ իր ժամացոյցն ալ միշտ առաջ կ'երթայ , իր կէսօրը , իր իրիկունը աւելի կանուխ կու գայ , ամէն բան իրեն ուշ կ'երևնայ : Օքսանքի մը պիտոր երթըցուի , կամ նաւա կը կամ ուրիշ պէտք եղած բան մը ատենին չէ պատրաստուեր , քիչ մը ուշացեր է եղեր , զօսանքը զօսանք չըլլար իրեն ալ՝ բոլոր տնեցոց ալ , համը հոտը կ'երթայ , ինչու՝ պարոնը քիթը կը կախէ : Գործք մը կ'ընես , անհամբեր մարդը գլխուդ վերեւը կ'անցնի , հանգիստ չի թողուր , շուտ ըրէ կ'ըսէ , ատենը կ'անցնի , ես բան գործք ունիմ , ծերու պէս , կրեայի պէս կը շարժիս . վերջապէս այնչափ բան կ'ըսէ , որ ըրածդ կը շփոթես , պէտք կ'ըլլայ որ նորէն սկսիս : Եւսօք մը սկսիս , ես իմացայ ըսելիքդ , աս կամ ան պիտոր ըլլայ կ'ըսէ , ու խօսքըդ կը կտրէ . չէ թէ միայն ըսելիքդ չի գիտնար , այլ և ըսածդ չի հասկընար : Պատմութիւն մը կը սկսիս պատմելու , որուն համը անկարծելի լմրնալու վերայ է , անհամբեր մարդը , սա վերջի համով կտորը՝ ասանկ կամ անանկ ընելը

պատմէ ըսելով՝ պատմութեան համը հոտը կը տանի :

Ինչ համբերութիւնը պըշտըկուող հիւանդութիւններու կը նմանի . տան մը մէջ մէկ անհամբեր անձ մը ուրիշներուն համբերութիւնն ալ կը քիչցընէ . ինքն ալ կը նեղի , ուրիշներուն ալ նեղութիւն կու տայ , ու կը ստուգէ ան առածը որ կ'ըսէ թէ՛ մեծ նեղութիւն է նեղութեան համբերել չի կրնալը :

*



Հանդէս հարցադնոթեան ուսմանց ՍԻՒԹԱՐԵԱՆ ԴԱՐԵԱՆ ԴԱՐՈՅԻՆ Ի ԲԵՐԱ ՍՈՍՈՒՆԴԵՆԱՅ ԿՕՆԻ :

ՍԻՒԹԱՐԵԱՆ ՍԻՒԹԱՐԵԱՆ ԹԵԱՆ ԻՄԿ ՎԼԻԿԱՆՈՐ ՆԱԿԱՏԱԿՆ ԱԼ Է ՍՊՈՅ ԴԱՍՏԻՎԱԿԱՆ ԹԻՒՆՈՐ , ՈՐՈՒՆ ՄԻՇՏ ՀՈԳ ՍԱՐԱԾ Է ԻՐ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵՆԷՆ Ի ՎԵՐ , Լ ԵՐ ՈՐ ԻՆՔՆ ՏԱՍՏԱՏՈՒԱԾ Է՝ ՀՈՆ ԴԱՐՈՅ ԱԼ ՈՒՂԵՐ Է ՏԱՍՏԱՏԵԼ ԱԳՔԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ՝ քրիստոնէական գիտութեան և արտաքին ուսմանց : Եւս զարոցներէն մէկն ալ է Ս. ՍԻՒԹԱՐԵԱՆ ԱՐՈՒԱՐԾԱՆԻՆ ԻՄՔԻ ՏԱՍՏԱՏՈՒԱԾ ՍԻՒԹԱՐԵԱՆ ԴԱՐՈՅ , ՈՐ ԻՐ ՈՒՍԱՆՈՂԱԳ ՏՐԱՎԱՐԱԿԱԼ ՀԱՐԿԱՐԵՆՈՒԹԻՐ ԿԱՍԱՐԵՅ ԱՆԳԵԱԼ ԱՎՐԻԼԻ ՍԿԻՂԸՆԵՐԸ , ՄԵԾ ՀԱՆԴԻՍՈՒՄ՝ ՈՐ ԻՐԵՆ ՎԱՏԻԼ Լ ԱԳՔԻՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԲԵՐԱԼ . Լ ՀԱՐԿԱՂԵՅ ՕՐԱԳԻՐՍ ՈՐ ՀԱՆԴԻՍԻՆ յԻՇԱՏԱԿԻՆ ՀԵՍ ՀՈՋԱԿԷ ԱԳՆԻ ՀԱՆԴԻՍԱԿԱՆԱԳ ՄԱՐԴԱՍԷՐ Լ ՉՈՒԱՐԹԱՅԵԼՈՒԹԻՒՆ , ՈՐ ԻՆՉԱՔՏ ՏՐԱՎԻՐՈՂԱԳՆ՝ ՌՍԱՆԿ ԱԼ ԻՐԵՆԳ ՀՈԳԵԿԻԳ ԵՂԸԱՐԳ՝ ՈՐ ԱՅՍ ՍՈՂԵՐՍ ԿՐ ԳՐԵՆ՝ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ Լ ՆՈՐՀԱԿԱՐՈՒԹԵԱՆ ԱՈՒԹ ԿՐ ՃԱՆՅՈՒԻ : ԵՍՆ ՂԻ յԱՅՏՆԻ ԿՐՆԱՆՔ ԸՍԵԼ ԹԷ ՀԱՆԴԵՍՐ ՄԵԾ Լ ՍԻՐԵԼԻ ԸՆՈՂԸ ՀԱՆԴԻՍԱԿԱՆԱԳ ՄԻԱԲԱՆ ԳԵՂԵԳԻԿ ԺՈՂՈՒՄ ԷՐ . ՄԱՆՐ ՍՊԱՅՈՅ ԱՈՒԱՅԻՆ ԱՆԳԱՄ ԻՐԵՆԳ ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆԳ ՓՈՐԾՐ՝ ԸՍՏ ԻՆՔԵԱՆ չՈՒՆԷՐ ԱՐԺԱՆԱՈՐ ՏՐԱՎՈՅՐԸ մը այնքան մեծարու ժողովքի . բայց այն չափ ազնուամիտ և բարեխնդիր անձանց այնպէս յօժարամիտ ժողովուրդուն պատ

Ճաններն էին այն տղայոց քաջալերք տալն՝ որ ազգերնուս ակներև և զգալի յոյսն են, մեր յաջորդներն են, մեր ցանկացած այսօրուրնէս աղէկ վաղիւներն են, այն քաջալերքն՝ որ ոչ միայն տղայոց, այլ և անոնց վրայ աշխատողաց՝ նաև բոլոր ազգին յորդոր են. այն եռանդն ազգասիրութե և յառաջադիմութեան՝ որ թէ այսպէս թէ այնպէս՝ հիմայ ազգերնուս բոլոր դասերուն և կարգերուն մէջ ալ կ'երևայ. և մանաւանդ այն Վ. Պօլսեցոց յատուկ բարեսիրութիւնն, (որ կը ջանայ միշտ միաբանիլ սիրով՝ ի բարին), ասոնք էին որ ժողուեցին յօժարութեամբ և մարդասիրաբար դպրատան մեծ սրահին մէջ հարիւրաւոր բազմական, որոնց պարագլուխ էին եկեղեցական և քաղաքական գլուխներ՝ մէկն անձին իսկ ներկայութեամբն, որ է Վերապատիւ Ղզգապետ Սելվեան վարդապետն, մէկան՝ Ղրհապատիւ Հասունեան Ղախագահ Ղրքեպիսկոպոսն, որ հիւանդութե պատճառաւ արգիլուած ըլլալով՝ իր փոխանորդովը, այն է մեծապատիւ Վեր. Յովսէփ Սարգապետ Հաճիդաւիթեան, որուն հետ էր իր եպիսկոպոսակիցն ալ Վեր. Ղնտոն Սարգապետ Շիմանեան, և Վեր. Յարութիւն Ղրքեպիսկոպոսն, հանդերձ բազմութեամբ յարգոյ Սարգապետաց թէ յաշխարհական ուխտէն և թէ ի կրօնաւորական միաբանութեանց : Այլեղեցական դասին նման պատկառելի էր ազգերնուս նուազութեան ատեն մնացած իշխանափայլ ամիրայից և պարունայց խումբ մը, որոնք բարի նախանձով իրենց զբաղմունքն և դիւրութիւնն թողած՝ հեռու արուարձաններէ եկեր էին. որոնց հետ ներկայ գտնուեցան վսեմափայլ Տիւղեան Սիհրան Չէլէպին և Ագիպտոսէն նոր հիւր եկած՝ այն աշխարհքին արտաքին տեսչութեան երբեմն առաջին պաշտօնեայ ազնուափայլ Ղրթին Պէյին որդիքն, և իր հօրեղբորորդի բժշկապետ բազմահմուտ Պետան Պէյն :

Արկու և կէս ժամ տևեց այս միութեան համաժողովն, ուր նախ դպրոցին

տեսուչն ատենաբանութեամբ իմացուց ժողովականաց ազգերնուս հիմակուան ուսումնասիրութեան ջանքն, և Սիւթիութեան դպրոցին նպատակը և անոր ուսմանց կարգը և հարցաքննելու նիւթերն. — ուր դեռավարժ տղայք սրտատրոփ՝ հանդէս ելլալով կը ցուցնէին բազմութեան իրենց տարեկան աշխատանքը, միանգամայն և քաջութիւնը, քրիստոնէական, պատմական, աշխարհագրական, թուաբանական ուսմանց մէջ, և հայկական ու գաղղիական լեզուներուն սկզբանց, և շարադրութեան և գրութեանց. — ուր սար մը սրբազան անձանց ձայնով և անձայն մաղթանօք կ'օրհնէին ազգին լաւութեան սերմանքն. — ուր իշխանաշուք պարունայք՝ իրենց քաջալերական նայուածքովքն և խօսիւք պարիսպ կը բոլորէին ազգին յառաջադիմութեանը. — ուր ծնողաց և ազգականաց սիրտն ալ իրենց սիրասուն զաւակացն հետ թընդալով՝ քաղցր աչաց սրբներով կը զբոյժէին անոնց աշխոյժը և համարձակութիւնը, և սուր աչքով կը դիտէին շրթունքներնուն շարժմանքը. — ուր ուսումնասէր ունկնդիրք վկայ հարցաքննութեանն՝ գոհ կ'ըլլային անոնց ջանից, — և ազնիւ ձեռքեր մրցանակներով կը զօրացնէին զնոյնն. հանդիսականք ալ ուրախ կ'ըլլային տեսաներնուն վրայ. — ուր և ինքն ազգերնուս յետին հոգեշունչ հայրն և լուսանորոգն Սիւթիութար իր վսեմակերպ արձանովն՝ հանդիսին գլուխը բռնած, և հոն եկած աննախանձ աչաց ցուցանելով իր լայն ճակտին վրայ ազգին օգտին համար ԾԾ տարի եռացուցած արեան քրտինքն, անմահական ժպիտ մը արձակելով իր քրտնածին որդւոց այս նուազ աշխատանքին վրայ ալ և այն աշխատանքը մեծարող ազնիւ հանդիսակալնաց վրայ, իր մեծ հոգւոյն կրկին շունչը՝ զատուածասիրութեան և իմաստութեան՝ շնչելով յօժարըդուսակ սրտից և աչաց մէջ, մէկ գեղեցիկ օրիկ մ'ալ կը նշանակէր ի պարծանս ազգիս հայոց : Ահ, որչափ գեղեցիկ և պայծառ օրեր

ալ պատրաստուած են անոր, երբ այսպէս ամէն դիէ իրար խառնած բարեսիրաբար գան բողբոռին քահանայական և քաղաքական ճառագայթք անոր արշալոյսը պայծառացընելու :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Մշտային սոսկաբանական սկզբնաորոշման նը և յատանանալուան պարտաւիճանը :

Մտաբերամ : — Տպագրութեան օգտակար արուեստը մեր ազգին մէջ ծաւալող գլխաւոր բարեխնդիր անձանց մէկն եղաւ Փիլիպպոսի յաջորդ Չուղայեցի (Յակովբ կաթողիկոսը, որ իրեն նախորդին նօտարը Նարեցի Մատթէոս սարկաւազը յամի 1636 արևմուտք զըրկեց, այն օգտակար արուեստին ետևէ ըլլալու : Մատթէոս Օմիւռնիայէն Սեւեթիկ անցնելով միտքը զրեր էր թէ հոն կարենայ գտնել պէտք եղած գործաւորը, և իր փափաքին հասնիլ . բայց ունեցած յուսոյն փճանալովը հարկ եղաւ որ հռովմ անցնի . և հոն երբոր բանը յաջողելու վրայ էր, հռովմայ մէջ գտնուող ազգայինք իրեն դէմ ելան , զանազան պատճառներով , և իր օգտակար փափաքը ընդունայնացուցին . « Ըբբ հախառհասէրք և բարեպետայ , ինչպէս կ'ըսէ Նարեցին Յիսուս որդի գրոց պատմական յիշատակարանին մէջ , գրգռեցին զմեծամեծս և զժողովս , առ 'ի խափանել զայս գործ . որ և եղևն իսկ » : Մատթէոսի սիրտը կոտրած՝ հոլանտացւոց Մմնդերտամ քաղաքը անցաւ , և հոն ճարտար արուեստաւոր մը գտնելով իրեք տեսակ գիր փորել տուաւ իր քովը եղած օրինակներուն համեմատ , զորն որ Սովսէս անունով ըբբունապետ մը իրեն տուեր էր , որ կ'երևնայ թէ սիւնեցի Սովսէս կաթոլ.

1 Տես էրես 40 :

ղիկոնն ըլլայ : Նախուցը առաւելութեան համար կրած վշտերուն վրայ՝ Նարեցին ուրիշ աւելի դառն նեղութիւններ ալ ունեցաւ իրեն բարենպատակ ջանիցը դէմ կեցողներէն , որոնք այլ և այլ զըբարտութեամբ՝ բարերարաց կամաւոր տուրքն ալ խափանել կը ջանային . Մատթէոս անոնց ամենուն դէմ դնելով , մասնաւոր տպարան բացաւ ու Յիսուս որդի տպագրել սկսաւ պատկերազարդ և ըստ կարի վայելուչ . բայց երբոր տպագրութիւնը 38երորդ թերթին էր հասեր , մահուան անկողին իյնելով վախճանեցաւ , ու այն պատճառաւ սկսած գործը անկատար ու պարտքերը մնացին :

Մն տեսնները Սսկան վարդապետին Սեւթիս եղբայրը Մմնդերտամ եկած էր վաճառականութեան պատճառաւ , ու Նարեցւոյն քաջած նեղութիւնները տեսնելով ինքնայօժար իրեն օգնական և ծախուցը ձեռնտու եղեր էր . ուստի Մատթէոսի մեռնելէն ետքը ամէն բան անոր գլուխը մնաց . բայց վաճառականութեան ու տպագրապետութեան արուեստին մէջ մեծ տարբերութիւն ըլլալով , խեղճն ինչ ընելիքը չէր գիտեր : Իր շփոթութիւնը լաւ կ'ըլլայ որ բուն իր խօսքերովը լսենք՝ . . . « յորժամ որ մեռաւ , (Ճարեցի Մարթէոսը) ես իբրև որբ մնացի Մմնդերտամ . վասն այն որ սրբազրող ոչ գոյր . բայց միայն ես էի կարդացող , որ չէի խիստ հմուտ . ժամանակ մի տարակուսեալ և պարապ մնացի . . . սկսայ մնացեալ ժող տետրն տպագրեցի . . . Սսպէս սրբազրեցի . օրինակն եզի մի կողմն . մի կու նայէի օրինակն , մի 'ի տպագրածն . յորժամ որ սխալ լինէր , ուղղէի . այսպէս սրբազրեցի մնացած չորեքտասան տետրն , ուսայ զսրբազրեւն . . . վասն որոյ աշխատանք ունիմ 'ի վերայ այս գործքիս , թէ այլ օգնութեամբ . . . և ուխտադիր եղեր եմ որ մինչ 'ի մահս . . . պիտի որ աշխատիմ վասն սուրբ Սմնդերտուն , որ ես պատճառ եղայ որ տպագրութեանն արհեստ , որ Մատթէոսն այն երբ մեռաւ՝ թէ որ ես չէի ո՞վ պիտի տիրէր 'ի վերայ քերթա .